# Տեղեկատվական ամփոփագիր

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Վարկի նպատակ | | Հիմնական միջոցների ձեռքբերման, շրջանառու միջոցների ձեռքբերման, շրջանառու միջոցների ձեռքբերումից առաջացած կրեդիտորական պարտքերի ֆինանսավորման նպատակով տրամադրվող վարկ |
| 2 | Վարկառու | | ՀՀ ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, Անհատ ձեռնարկատեր |
| 3 | Արժույթ | | ԱՄՆ դոլար |
| 4 | Վարկի նվազագույն ժամկետ | | 14 օր |
| 5 | Վարկի առավելագույն ժամկետ | | 1095 օր |
| 6 | Վարկի գումար | նվազագույն | 50 000 ԱՄՆ դոլար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | առավելագույն | Սահմանափակվում է ներքին կանոնակարգերով | |
| 7 | Վարկի տարեկան տոկոսադրույք | | Վարկի պայմանագրի կնքման օրվանից սկսած` առաջին 180 օրը | 6.9% |
| | | | Վարկի պայմանագրի կնքման օրվանը հաջորդող 181-րդ օրվանից սկսած մինչև վարկային պայմանագրի վերջնաժամկետը | 10.9% |
| 8 | Վարկային հայտի ուսումնասիրության վճար | | Չի սահմանվում | |
| 9 | Վարկի տրամադրման միջնորդավճար | | Վարկի գումարի 0.5% միանվագ | |
| 10 | Վարկի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատված | | Առավելագույնը 6 ամիս միանվագ` վարկային պայմանագրի կնքման օրվանից սկսած | |
| 11 | Վարկի և տոկոսագումարների մարումներ | | 1. Անուիտետային` վարկի մայր գումարի և տոկոսագումարի հանրագումարի ամսական հավասարաչափ մարումներ,<br>2. Նվազող` վարկի մայր գումարի մարումները հավասարաչափ, իսկ տոկոսագումարները` ամսական: | |

| | | |
|---|---|---|
| 12 | Բիզնեսի գործունեության նվազագույն ժամկետ (անընդհատ) | 12 ամիս |
| 13 | Բանկային հաշվի բացում/սպասարկում | Պահանջվում է համաձայն սակագների |
| 14 | Վարկի գումարի կանխիկացում | Համաձայն Բանկում գործող սակագների ( վարկի գումարի կամ դրա մի մասի կանխիկ օգտագործումը Բանկի իրավասու մարմնի որոշմամբ կարող է սահմանափակվել (կանխիկ միջոցների օգտագործում է համարվում նաև հաճախորդի մեկ հաշվից Բանկում կամ այլ բանկերում գտնվող իր մեկ այլ հաշվին իրականացվող փոխանցումները)): |
| 15 | Վարկառուին/երաշխավորին ներկայացվող տարիքային սահմանափակում | ԱՁ կարգավիճակ ունեցող անձանց, ֆիզիկական անձանց տարիքը վարկի մարման վերջնաժամկետին չպետք է գերազանցի 70 տարեկանը: |
| 16 | Վարկառուի (այդ թվում՝ նրա կանոնադրական կապիտալում 10% և ավել մասնակիցների)/երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ | 1. Վարկի ստացման օրվա դրությամբ ժամկետանց/ դասակարգված պարտավորությունների բացակայություն,<br>2. Դրական կամ չեզոք/Բանկի կողմից ընդունելի վարկային պատմություն՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի,<br>3. Բանկի իրավասու մարմնի որոշմամբ կարող է պահանջվել այլ մասնակիցների, ինչպես նաև վարկառուի հետ սերտ |

| | | |
|---|---|---|
| | | փոխկապակցված այլ անձանց վարկային պատմության նկատմամբ պահանջներ |
| 17 | Ապահովվածության ընդունելի միջոցներ/գրավ | • Անշարժ գույք,<br>• Հիմնական միջոցներ /սարքավորումներ, տեխնիկա, այլ գույք/,<br>• Տրանսպորտային միջոցներ,<br>• Շրջանառության մեջ գտնվող ապրանքներ,<br>• Դեբիտորական պարտքի իրավունք,<br>• Ֆինանսական հոսքեր,<br>• Երաշխիքներ, երաշխավորություններ,<br>• Դրամական միջոցներ,<br>• Թանկարժեք մետաղներ (իրեր)*,<br>• Բաժնեմասեր,<br>• Արժեթղթեր,<br>• իրավունքի գրավ<br>• ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գույք կամ գույքային իրավունք: |
| 18 | Վարկ/գրավ հարաբերակցություն | Համաձայն Բանկում գործող ներքին իրավական ակտերի |
| 19 | Գրավի առարկայի ապահովագրություն | Տրանսպորտային միջոցների գրավի դեպքում գրավի առարկան ենթակա է ապահովագրման գնահատված շուկայական արժեքից: Գրավի մնացած տեսակների դեպքում վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնող իրավասու մարմինը կարող է պահանջել գրավի առարկայի ապահովագրություն |

| | | |
|---|---|---|
| *Ոսկյա իրերի գնահատումն իրականացվում է համաձայն բանկում գործող սակագների: | | |
| 20 | Տույժեր, տուգանքներ | Ժամկետանց վարկի տոկոս՝ օրական 0.1% |
| | | Ժամկետանց տոկոսագումարի տույժ՝ օրական 0.1% |
| | | Վարկի գումարի վաղաժամկետ մարման դեպքում տույժ՝ չի սահմանվում վարկի գործողության առաջին 180 օրվա ընթացքում վարկի վաղաժամկետ մարման դեպքում, 181-րդ օրվանից սկսած վարկի գումարի վաղաժամկետ մարման դեպքում սահմանվում է տույժ՝ վաղաժամկետ մարվող գումարի 3 %-ի չափով |
| 21 | Հայտի ընդունման վայր | Բանկի մասնաճյուղեր, Գլխամասային գրասենյակ |
| 22 | Որոշման կայացման առավելագույն ժամկետ | Բանկի կողմից պահանջվող ամբողջական փաստաթղթերի փաթեթը ներկայացնելուց հետո 15 աշխատանքային օր |

| | | |
|---|---|---|
| 23 | Որոշման մասին հաճախորդին տեղեկացնելու ժամկետ | 1 աշխատանքային օր |
| 24 | Որոշման վավերականության ժամկետ | 30 աշխատանքային օր |
| 25 | Որոշման վերահաստատման ժամկետ | Առավելագույնը մեկ անգամ, որոշման վավերականության ժամկետը լրանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ վերահաստատման օրվա դրությամբ գործող վարկավորման պայմաններով: |
| 26 | Վարկը տրամադրելու ժամկետ | Համաձայն Բանկում գործող ներքին իրավական ակտերի |

Տոկոսագումարների հաշվարկման կարգ՝

Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի վրա՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ:

Արտարժույթի ազդեցությունը

Հաշվի առնելով, որ Բանկը տրամադրում է վարկեր ոչ միայն ՀՀ դրամով, այլ նաև արտարժույթով, վարկառու պետք է գիտակցի, որ արտարժույթի տատանումները կարող են դրական/բացասական ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

Հայտի մերժում

Բանկը իրավասու է հրաժարվել վարկը տրամադրելուց, եթե փոփոխվել են վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման համար էական համարվող պայմանները (օրինակ՝ գրավի արժեքի փոփոխություն, կետանցված պարտավորություններ, բանկային հաշիվների կալանք/արգելանք և այլն):

Հաճախորդի ցանկությամբ Բանկը կարող է տրամադրել վարկի մերժման վերաբերյալ տեղեկատվությունը գրավոր:

**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ:** ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ: ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ՉՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:

Վարկառուի կողմից պարտականությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել վարկառուի այլ գույքի հաշվին: